



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
Ա Պ Ա Ր Ա Ն Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի Ա Վ Ա Գ Ա Ն Ի**

ՀՀ Արագածոտնի մարզ, ք. Ապարան Բաղրամյան 26, Հեռ. (0252)2-43-93
Էլ. փոստ՝ aparanixaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ՄԱՐՏԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ N 09-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով, հիմք ընդունելով ավագանու անդամների քվեարկության արդյունքները.

Ապարան համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել ՀՀ Արագածոտն մարզի Ապարան համայնքի ավագանու՝ 2021 թվականի մարտի 19-ի նիստի օրակարգը /կցվում է/:

Ավագանի՝

(կողմ-10)

(դեմ-0)

(ձեռնպահ-0)

Թադևոսյան Հայկազուն

Պետրոսյան Արա

Մակարյան Վահան

Երեմյան Աղվան

Գեղամյան Խաչիկ

Վարդանյան Հովհաննես

Ասատրյան Արամ

Կարապետյան Էդգար

Շահբազյան Հովհաննես

Կարապետյան Արտյոմ

Համայնքի ղեկավար՝

Կ.Եղիազարյան

ՕՐԱԿԱՐԳ
ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 19.03.2021թ ՆԻՍՏԻ

1. Ապարանի համայնքապետարանի ներքին աուդիտի 2020թ. գործունեության տարեկան հաշվետվության մասին:
/Ջեկուցող՝ Ա. Առաքելյան/
2. Ապարան համայնքի ղեկավարի հաշվետվությունը՝ համայնքի 2020թ. բյուջեի կատարման մասին:
/Ջեկուցող՝ Կ. Եղիազարյան/
3. Ապարան համայնքի ավագանու 2020 թ նոյեմբերի 27-ի N 86-Ա և N 87-Ա որոշումների հավելվածներում փոփոխություններ կատարելու մասին:
/Ջեկուցող՝ Գ. Աբրահամյան/
4. Ապարան համայնքի <Արագածի բժշկական կենտրոն>, <Քուչակի բժշկական ամբուլատորիա>, <Շենավանի բժշկական ամբուլատորիա> ՀՈԱԿ-ների 2021թ. բյուջենները հաստատելու մասին:
/ Ջեկուցող՝ Գ. Աբրահամյան/
5. Ապարան համայնքի <Արագածի բժշկական կենտրոն>, <Քուչակի բժշկական ամբուլատորիա>, <Շենավանի բժշկական ամբուլատորիա> ՀՈԱԿ-ների 2021թ թվաքանակները, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:
/Ջեկուցող՝ Գ. Աբրահամյան/
6. Ապարանի համայնքապետարանի աշխատակազմի 2021թ թվաքանակում և հաստիքացուցակում լրացում և փոփոխություն կատարելու մասին:
/Ջեկուցող՝ Գ. Աբրահամյան/
7. <<Ապարան համայնքում Տեղական տուրքերի և վճարների 2021թ. տեսակներն ու դրույքաչափերը հաստատելու մասին>> ավագանու 27.11.2020 թ N 88- Ա որոշման հավելված N 1-2-ում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին:
/Ջեկուցող՝ Գ. Աբրահամյան/
8. Արցախյան պատերազմում զոհվածների ընտանիքներին հարկային արտոնություններ տրամադրելու մասին:
/Ջեկուցող՝ Ն. Սիրեկանյան/
9. Համայնքի մի խումբ բնակիչների հարկային արտոնություններ տրամադրելու մասին:
/Ջեկուցող՝ Ն. Սիրեկանյան/
10. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդ վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին:
/Ջեկուցող՝ Վ. Սուքիասյան/
11. Համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերը մրցութային կարգով վարձակալության տրամադրելու թույլտվություն տալու մասին:
/Ջեկուցող՝ Վ. Սուքիասյան/
12. Ապարան համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերը մրցութային կարգով վարձակալության տրամադրելու թույլտվություն տալու մասին:
/Ջեկուցող՝ Վ. Սուքիասյան/
13. Ապարան համայնքի Ափնագյուղ գյուղի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող եկեղեցին՝ սպասարկման տարածքով անհատույց սեփականության իրավունքով Հայաստանի Առաքելական Սուրբ եկեղեցուն տրամադրելու մասին:
/Ջեկուցող՝ Վ. Սուքիասյան/

14. Ապարան համայնքի Եղիպատրուշ գյուղի վարչական տարածքում գտնվող քաղաքացիների սեփականությունը հանդիսացող հողատարածքի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

/Ջեկուցող՝ Վ. Սուքիասյան/

15. Ապարան համայնքի Վարդենիս գյուղի վարչական տարածքում գտնվող իրավաբանական անձի սեփականությունը հանդիսացող հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

/Ջեկուցող՝ Վ. Սուքիասյան/

16. Ապարան համայնքի Վարդենուտ գյուղի վարչական տարածքում գտնվող քաղաքացու սեփականությունը հանդիսացող հողատարածքի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

/Ջեկուցող՝ Վ. Սուքիասյան/

17. Ապարան համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն հանդիսացող Զրային նշանակության հողամասը ձկնաբուծության նպատակով կառուցապատման իրավունքով վարձակալության տրամադրելու թույլտվություն տալու մասին:

/Ջեկուցող՝ Վ. Սուքիասյան/

18. Ապարան համայնքի Շողակն գյուղի վարչական տարածքում գտնվող քաղաքացու սեփականություն հանդիսացող գյուղ. նշանակության վարելահողի և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղ. նշանակության արտավայրի նպատակային նշանակությունները բնակավայրերի բնակելի կառուցապատման նշանակության փոխելուն հավանություն տալու մասին:

/Ջեկուցող՝ Վ. Սուքիասյան/

19. Ապարան համայնքի Զորագլուխ գյուղի վարչական տարածքում քաղաքացու սեփականությունը հանդիսացող հողամասի նպատակային նշանակությանը փոխելուն հավանություն տալու մասին:

/Ջեկուցող՝ Վ. Սուքիասյան/

20. Ապարան համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքերը աճուրդ վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին:

/Ջեկուցող՝ Վ. Սուքիասյան/

21. Արցախյան պատերազմում զոհված Հայկ Կիրակոսյանի ընտանիքին բնակարանի կարիքավոր ճանաչելու մասին:

/Ջեկուցող՝ Ա. Կարապետյան/

22. Արցախյան պատերազմում զոհված Համբարձում Կիրակոսյանի ընտանիքին բնակարանի կարիքավոր ճանաչելու մասին:

/Ջեկուցող՝ Ա. Կարապետյան/

23. Ապարան համայնքի Վարդենուտ գյուղի բնակիչ Տաթևիկ Մանուկյանին դրամական աջակցություն տրամադրելու մասին:

/Ջեկուցող՝ Ա. Կարապետյան/

24. Ապարան համայնքի Քուչակ գյուղի բնակիչ Արման Պողոսյանին դրամական աջակցություն տրամադրելու մասին:

/Ջեկուցող՝ Ա. Կարապետյան/

25. Ապարան համայնքի Ապարան քաղաքի բնակիչ Ավետիս Պողոսյանին դրամական աջակցություն տրամադրելու մասին:

/Ջեկուցող՝ Ա. Կարապետյան/

26. ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Ապարան քաղաքի քարտեզագրման աշխատանքների ընթացքում քաղաքացու անվամբ հաշվառված բնակելի կառուցապատման հողամասերը համայնքային սեփականություն ճանաչելու մասին:

/Ջեկուցող՝ Վ. Սուքիասյան/

Աշխատակազմի քարտուղարի ժ/պ



Ա. Կարապետյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ Ա Պ Ա Ր Ա Ն Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի Ա Վ Ա Գ Ա Ն Ի

ՀՀ Արագածոտնի մարզ, ք. Ապարան Բաղրամյան 26, Հեռ. (0252)2-43-93
Էլ. փոստ՝ aparanixaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ՄԱՐՏԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ N 10-Ա

ԱՊԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՆԵՐՔԻՆ ԱՌԻԴԻՏԻ 2020Թ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Ներքին աուդիտի մասին>> ՀՀ օրենքի պահանջներով, հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 2012թ. փետրվարի 17-ի թիվ 143-Ն, 2015 թ դեկտեմբերի 10-ի թիվ 856-Ն հրամանների պահանջները և Ապարանի համայնքապետի կողմից հաստատված 2020-2021թթ. ռազմավարական ու 2020թ. տարեկան ծրագրերով, ներքին աուդիտի ծառայություն իրականացնող „ՓԼՐՖԵՔԹ ԱՌԻԴԻՏ,, ՍՊԸ կողմից 2020թ. աուդիտ է իրականացվել Ապարանի համայնքապետարանի, համայնքային ենթակայության 11 ՀՈԱԿ-ներում:

Ուսումնասիրությունների ընթացքում հայտնաբերված խախտումների, թերությունների ու բացթողումների վերացման ուղղությամբ անցկացվել են քննարկումներ, հաստատվել են գործողությունների ծրագիր, որը հետևողականորեն իրականացվում է:

Ապարանի համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Ապարանի համայնքապետարանում և 11 ՀՈԱԿ-ներում 2020թ. անցկացված ներքին աուդիտի տարեկան հաշվետվությունը:

2. Համայնքի ղեկավարին՝

ա/հետևողականորեն ավելի բարձրացնել ներքին աուդիտի իրականացման արդյունավետությունը, ապահովել ուսումնասիրությունների անհրաժեշտ խորություն ու բազմակողմանիություն:

բ/ուժեղացնել հսկողությունը կատարված ուսումնասիրությունների ընթացքում բացահայտված խախտումների ու բացթողումների վերացման ուղղությամբ, ձեռնարկել անհրաժեշտ և արդյունավետ միջոցներ հետազայում դրանք բացառելու համար:

Ավագանի՝

(կողմ-10)

(դեմ-0)

(ձեռնպահ-0)

Թադևոսյան Հայկազուհի

Պետրոսյան Արա

Մակարյան Վահան

Երեմյան Աղվան

Գեղամյան Խաչիկ

Վարդանյան Հովհաննես

Ասատրյան Արամ

Կարապետյան Էդգար

Շահբազյան Հովհաննես

Կարապետյան Արտյոմ

Համայնքի ղեկավար՝

Կ.Եղիազարյան

**Արագածոտնի մարզի Ապարանի համայնքապետարանի ներքին աուդիտի
2020 թվականի գործունեության
տարեկան հաշվետվություն**

N	Հաշվետվության գլխի անվանում	Բովանդակություն
1.	Ներածություն	Ներքին աուդիտի տարեկան հաշվետվությունը ուղղված է ներկայացվելու Արագածոտնի մարզի Ապարանի համայնքի ղեկավարին, որում ամփոփված են ներքին աուդիտի պարտականություններ կատարող «ՓԸՐՖԵՔԹ ԱՌԻԴԻՏ» ՍՊԸ կողմից տարվա ընթացքում կատարված աշխատանքների արդյունքները: Ներքին աուդիտի տարեկան հաշվետվությունը հնարավորություն է ընձեռում կատարել համեմատություն ներքին աուդիտի ստորաբաժանման կատարողականի և աուդիտի տարեկան ծրագրի միջև և բացահայտել ի հայտ եկած շեղումները և դրանց պատճառները: Եթե կատարողականի և աուդիտի տարեկան ծրագրի միջև առկա են շեղումներ, ապա, պարզելով այդ շեղումների պատճառները, հարկավոր է որոշում կայացնել ներքին աուդիտի ռազմավարական ծրագրում փոփոխություններ կատարելու վերաբերյալ: Հաշվետվությունն ընդգրկում է 2019 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածը: Հաշվետվությունը նպատակ ունի ամփոփ ներկայացնելու 2020 թվականի ընթացքում «ՓԸՐՖԵՔԹ ԱՌԻԴԻՏ» ՍՊԸ կողմից աուդիտի ենթարկված միավորների և ոլորտների նկարագրությունը, կատարված առաջադրանքների եզրակացությունները և ներկայացված առաջարկությունները, դրանց արդյունքում համապատասխան ստորաբաժանումների կողմից կատարված և կատարման ընթացքում գտնվող աշխատանքները և շտկումները:
2.	Կազմակերպության ներքին հսկողության գործընթացները	Համայնքապետարանում և կից կազմակերպություններում ներդրված են հետևյալ հսկողության գործընթացները՝ - կազմակերպության կառուցվածքը օժանդակում է արդյունավետ որոշումների կայացման գործընթացին, - ծախսերը ճշտությունը, հիմնավորվածությունը և դրանց արդյունավետությունը հսկվում է ֆինանսական բաժնի և համապատասխան աշխատակիցների կողմից, - աշխատակիցների հիմնական պարտականությունները արտացոլվում են պաշտոնի անձնագրերում և աշխատանքային պայմանագրերում, - աշխատակիցների հաճախելիության մատյանի կիրառում, - սինթետիկ և անալիտիկ հաշվառումները հիմնականում իրականացվում են համակարգչային ծրագրերով, - գնահատվում և հաստատվում են հաշվետվություններում արտացոլված տվյալների արժանահավատությունը, - պետական գնումների գործընթացը: Ներքին հսկողական գործընթացները հիմնականում գործում են արդյունավետ , անհրաժեշտ են հսկողական գործընթացներ ներդնել նաև սպասարկման ոլորտներում, արդյունավետ աշխատանքը ապահովելու նպատակով: Հսկողական համակարգերի ոչ արդյունավետ իրականացման արդյունքում աուդիտի ենթարկված միավորներում հիմնականում առկա են հաշվապահական հաշվառման հիմնական սկզբունքների խախտման, ամսական կատարված ծախսերի վերաբերյալ ամփոփ հաշվետվության կազմման, անալիտիկ (վերլուծական) հաշվառման և սինթետիկ (ընդհանրացված) հաշիվների տվյալների համապատասխանության, սննդամթերքի մենյու-պահանջագրերի ներկայացման, ձեռք բերման և ծախսման, գնումների գործընթացի և այլ կարգերի խախտման դեպքեր: Ներքին աուդիտի առաջադրանքների արդյունքում ի հայտ են եկել 73 հատ բացթողումներ և անհամապատասխանություններ, որոնցից 55-ը շտկվել են գործողությունների իրականացման ծրագրերով սահմանված ժամկետներում և ընդունվել են ի գիտություն, իսկ 18-ը գտնվում են շտկման փուլում: Խախտումների շտկման արդյունավետությունը գնահատվում է 75.3 տոկոս :
3.	Ներքին աուդիտի ստորաբաժանման կատարողականը	Համայնքապետարանի ներքին աուդիտի 2020 թվականի տարեկան և 2020-2022 թվականների ռազմավարական ծրագրերին համապատասխան հաշվետու տարում պլանավորված տասը աուդիտորական առաջադրանքներից իրականացվել է տասը: Իրականացվել են «Ապարանի համայնքապետարանի աշխատակազմ» ՀԿ-ի, «Ապարան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի, «Ապարան մշակույթի կենտրոն» ՀՈԱԿ-ի, «Ապարանի արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի և «Ապարանի կոմունալ» ՀՈԱԿ-ի, «Ապարանի Վարդանանց

N	Հաշվետվության զյխի անվանում	Բովանդակություն				
		ասպետների անվան մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի, «Արագածի Գուսան Աշխուժի անվան արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի, «Արագածի Լիա-Տեր Ղևոնդյանի անվան մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի, «Արագածի կոմունալ» ՀՈԱԿ-ի և «Ապարան համայնքի Քուչակի Միրիդատ Ասատրյանի անվան մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի համակարգի գնահատման առդիտ: Ներքին առդիտորի պարտականությունները իրականացվել է «ՓԸՐՖԵՔԹ ԱՌԻԴԻՏ» ՍՊԸ կողմից, որը ընդգրկված է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության ներքին առդիտորի որակավորում ունեցող կազմակերպությունների ցանկում: 2020 թվականի ընթացքում պլանավորված առդիտորի փոփոխություն տեղի է ունեցել և առդիտորական առաջադրանքները իրականացվել են «ՓԸՐՖԵՔԹ ԱՌԻԴԻՏ» ՍՊԸ ներքին առդիտոր Զաքել Մաթոսյանի, Թորոս Վարդանյանի և Ենոք Մինասյանի կողմից: Հաշվետու տարվա ընթացքում վերջինիս կողմից ծախսված ժամանակահատվածը ըստ գործընթացների և միավորների ներկայացված է ներքոհիշյալ աղյուսակում:				
		h/h	Միավորի անվանումը	Դրանավորված ժամանակը	Փաստացի ծախսված ժամանակը	Շեղման պատճառը
		Ընթացակարգերի իրականացում				
		1.	«Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարանի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկ	50	50	
		2.	«Ապարան մարզադպրոց» ՀՈԱԿ	10	10	
		3.	«Ապարան մշակույթի կենտրոն» ՀՈԱԿ	10	10	
		4.	«Ապարանի արվեստի դպրոց» ՀՈԱԿ	11	11	
		5.	«Ապարանի կոմունալ» ՀՈԱԿ	30	30	
		6.	«Ապարանի Վարդանանց ասպետների անվան մանկապարտեզ» ՀՈԱԿ	15	15	
		7.	«Արագածի Գուսան Աշխուժի անվան արվեստի դպրոց»	11	11	
		8.	«Արագածի Լիա-Տեր Ղևոնդյանի անվան մանկապարտեզ» ՀՈԱԿ	12	12	
		9.	«Արագածի կոմունալ» ՀՈԱԿ	30	30	
		10.	«Ապարան համայնքի Քուչակի Միրիդատ Ասատրյանի անվան մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ	10	10	
		11.	Ներքին առդիտի իրականացման չնախատեսված դեպքեր	20	0	Չնախատեսված դեպքեր չեն եղել
		12.	Շարունակական մասնագիտական վերապատրաստումներ	5	5	
		Առդիտի առաջադրանքի արդյունավետության գնահատման ստուգաթերթերով տրված գնահատականները				
			Գնահատման տարրեր	Միջին գնահատական		
		1.	Առաջադրանքի յուրաքանչյուր նպատակի իրագործման համար մշակվել է առդիտի աշխատանքային ծրագիր	4		
		2.	Աշխատանքային փաստաթղթերը և առդիտի աշխատանքային ծրագրերը մշակվել և ստուգվել են պահանջվող ժամկետներում	4		
		3.	Աշխատանքային փաստաթղթերը և առդիտի աշխատանքային ծրագրերը արդյունավետ կերպով անդրադառնում են դիսկրի գնահատմամբ սահմանված հայտնի ռիսկային ոլորտներին և բավարար են ներքին հսկողության կիրառվող համակարգերի արդյունավետությունը գնահատելու համար	4		
		4.	Առդիտի աշխատանքային ծրագիրը և համապատասխան աշխատանքների շրջանակը ճշգրտվել է՝ ելնելով փաստացի պայմաններից	4		
		5.	Աշխատանքային փաստաթղթերում հստակ կերպով հիմնավորված են և/կամ բացատրվում են յուրաքանչյուր առդիտի աշխատանքային ծրագրի հիման վրա	3		

N	Հաշվետվության զվխի անվանում	Բովանդակություն	
		կատարված աշխատանքների արդյունքները և եզրակացությունները	
6.	Առաջադրանքի աշխատանքային փաստաթղթերը, աուդիտի աշխատանքային ծրագրերը և մյուս համապատասխան փաստաթղթերը վերջնական տեսքի են բերվել սահմանված ժամկետներում: Գործուղման պահանջագրերը, հրամանները և այլ կազմակերպման պայմանավորվածությունները կատարվում են նախապես՝ աուդիտի ժամանակի կորուստը նվազագույնի հասցնելու նպատակով		3
7.	Բոլոր աշխատանքային փաստաթղթերը ստուգվում են, որպեսզի լինեն ամբողջական, ճիշտ և լիարժեք հիմնավորեն քննարկվող նախնական եզրակացությունները		3
8.	Առաջադրանքի աշխատանքը կատարվել է, և բոլոր աշխատանքային փաստաթղթերը ներկայացվել են ժամանակին		4
9.	Ստացված արդյունքներում ներառվում են չափանիշները, պայմանը, պատճառը, ազդեցությունը: Առաջարկություններում անդրադարձ է կատարվում պատճառներին		3
10.	Հայտնաբերված թերացումների ցանկը հաստատվել և ամփոփ ներկայացվել են աուդիտի ենթարկվող միավորի ղեկավարության բոլոր համապատասխան օղակներին		4
11.	Արդյո՞ք աուդիտի աշխատանքային փաթեթը (աուդիտի աշխատանքային ծրագրեր, աշխատանքային փաստաթղթեր, հաշվետվություններ, և այլն) բավարարում է նախատեսվող ընթերցողին և հստակ հաղորդում են խնդրի էությունը		3
12.	Քննարկվող նախնական հաշվետվությունում անդրադարձ է կատարվում առաջադրանքի բոլոր նպատակներին		4
13.	Նախնական հաշվետվությունների քննարկման և վերջիններիս աուդիտի ենթարկվող միավորի կողմից տրվող նախնական պատասխանների տրամադրման ժամկետները պահպանվել են		4
14.	Առաջադրանքը նպաստել է կազմակերպության համար հավելյալ արժեքի ավելացմանը		3
Ընդամենը			50
Միջին գնահատականը			3.57
Աուդիտի ենթարկվող միավորների կողմից լրացված ստուգաթերթով տրված գնահատականները			
	Գնահատման տարրեր	Միջին գնահատական	
15.	Ստացել եք արդյոք առաջադրանքի մասին տեղեկացնող ծանուցում նախքան առաջադրանքի մեկնարկը	4.00	
16.	Արդյոք սկզբնական հանդիպումն անցկացվել է նախքան առաջադրանքի մեկնարկը կամ այն սկսելուն զուգահեռ	4.00	
17.	Արդյոք սկզբնական հարցազրույցի ժամանակ Ձեզ հետ քննարկվել են առաջադրանքի նպատակները, շրջանակները, ժամկետները և կազմակերպչական այլ հարցեր	4.00	
18.	Արդյոք հարցազրույցի ժամանակ Ձեզ հարցրել են առաջադրանքի վերաբերյալ Ձեր մտահոգությունների մասին	4.00	
19.	Արդյոք աուդիտորներն արձագանքել են առաջադրանքի վերաբերյալ Ձեր մտահոգություններին	4.00	
20.	Դուք տեղեկացվել եք առաջադրանքի ժամկետների փոփոխություններին	4.00	
21.	Մեկնարկային հարցազրույցի ժամանակ արդյոք եզրափակիչ հանդիպման համար նախնական ժամկետ է սահմանվել	3.00	
22.	Արդյոք աուդիտորներն արագ են արձագանքել Ձեր աշխատանքային իրավիճակի առանձնահատկություններին	4.00	
23.	Արդյոք առաջադրանքի ընթացքում Դուք պարբերաբար տեղեկացվել եք էական հարցերի մասին՝ դրանց զարգանալուն զուգընթաց	4.00	
24.	Արդյոք Ձեզ տրամադրվել է նախնական հաշվետվության կրկնօրինակը՝ եզրափակիչ հանդիպումից առաջ	3.00	
25.	Արդյոք Դուք կամ Ձեր աշխատակազմի հիմնական անդամները մինչ նախնական հաշվետվության տրամադրումը տեղեկացվել եք ամփոփված բոլոր էական հարցերի մասին	4.00	
26.	Արդյոք եզրափակիչ հանդիպումը տեղի է ունեցել համաձայնեցված ժամկետներում	3.00	
27.	Արդյոք եզրափակիչ հանդիպման ընթացքում Ձեզ հետ քննարկվել են ստացված արդյունքները պատշաճ մանրամասնությամբ	4.00	
28.	Եզրափակիչ հանդիպման ժամանակ արդյոք բառերի փոփոխության, ոճի և ստացված արդյունքների տեսանկյունների հետ կապված հարցերին արձագանքելիս աուդիտորները ճկուն են գտնվել	4.00	
29.	Արդյոք եզրափակիչ հարցազրույցի ժամանակ քննարկվել են առաջադրանքի ընթացքում հայտնաբերված բոլոր թերությունները	4.00	
30.	Արդյոք Ձեր պատասխանները (կամ պատասխանելու ցուցումները) քննարկվել են հանդիպման ժամանակ	4.00	
31.	Ձեր կարծիքով այս առաջադրանքը որքանով է նպաստել հավելյալ արժեքի ստեղծմանը Ձեզ համար	4.00	
Ընդամենը			65.0
Միջին գնահատականը			3,82

N	Հաշվետվության գլխի անվանում	Բովանդակություն
4.	Ամփոփագիր	Համայնքապետարանի ներքին աուդիտի 2020 թվականի տարեկան և 2020-2022 թվականների ռազմավարական ծրագրերին համապատասխան հաշվետու տարում պլանավորված տասը աուդիտորական առաջադրանքներից իրականացվել է տասը: Իրականացվել են «Ապարանի համայնքապետարանի աշխատակազմ» ՀԿ-ի, «Ապարան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի, «Ապարան մշակույթի կենտրոն» ՀՈԱԿ-ի, «Ապարանի արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի և «Ապարանի կոմունալ» ՀՈԱԿ-ի, «Ապարանի Վարդանանց ասպետների անվան մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի, «Արագածի Գուսան Աշխուժի անվան արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի, «Արագածի Լիա-Տեր Ղևոնդյանի անվան մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի, «Արագածի կոմունալ» ՀՈԱԿ-ի և «Ապարան համայնքի Քուչակի Միրիդատ Ասատրյանի անվան մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի համակարգի գնահատման աուդիտ: Ներքին աուդիտորի պարտականությունները իրականացվել է «ՓԸՐՖԵՔԹ ԱՌԻԴԻՏ» ՍՊԸ կողմից, որը ընդգրկված է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության ներքին աուդիտորի որակավորում ունեցող կազմակերպությունների ցանկում: 2020 թվականին իրականացված աուդիտորական առաջադրանքների ընթացքում հայտնաբերվել են թերություններ ու բացթողումներ, որոնց վերաբերյալ կազմվել են արձանագրություններ: Արձանագրություններում տեղ գտած թերությունների հիման վրա կազմվել են վերջնական հաշվետվություններ և շտկման գործողությունների ծրագրեր: Հայտնաբերված թերությունների, բացթողումների և կատարված առաջադրանքների արդյունքները քննարկվել են Ապարանի համայնքի ղեկավարի հետ անցկացրած ներքին աուդիտի նիստերում: «ՓԸՐՖԵՔԹ ԱՌԻԴԻՏ» ՍՊԸ կողմից վերահսկվել է, որպեսզի շտկման գործողությունների ծրագրերով նախատեսված ժամկետներում վերացվեն նշված թերությունները և բացթողումները: Կազմակերպությունում ներդրված հսկողական համակարգերը հիմնականում գործել են արդյունավետ, անհրաժեշտ է ներդնել հսկողական համակարգեր նաև սպասարկման ոլորտներում: Ներքին աուդիտի իրականացման ընթացքում Ապարանի համայնքապետարանի կողմից աուդիտի շրջանակների սահմանափակման դեպքեր չեն արձանագրվել:
5.	Եզրակացություններ	Ներքին աուդիտի հետագա զարգացման համար «ՓԸՐՖԵՔԹ ԱՌԻԴԻՏ» ՍՊԸ-ն իրականացնում է ներքին աուդիտի որակի շարունակական և պարբերական գնահատումներ՝ աուդիտի ենթարկվող միավորների կողմից առաջադրանքի իրականացման որակի վերաբերյալ ստուգաթերթի, ինչպես նաև ներքին աուդիտի ստանդարտներին և վարձագծի կանոններին համապատասխանության գնահատման ստուգաթերթերի միջոցով: Ներքին աուդիտորի պահանջմունքներից է մասնագիտական կարողունակության ապահովումը, որն էլ իրականացվում է շարունակական մասնագիտական վերապատրաստումների, ինչպես նաև ինքնակրթության միջոցով:

«ՓԸՐՖԵՔԹ ԱՌԻԴԻՏ» ՍՊԸ

տնօրեն



[Handwritten signature]

Ա. Բաբայան

Ներքին աուդիտի որակի երաշխավորման

հաշվետվություն

Կազմակերպության անվանումը՝ ՀՀ, Արագածոտնի մարզի Ապարան համայնքի
աշխատակազմ

ՀՎՀՀ՝ 05022969

«ՓԸՐՖԵՔԹ ԱՌԻԴԻՏ» ՍՊԸ տնօրեն՝ Ա. Բաբայան

1. Ներքին աուդիտի որակի երաշխավորման իրավական դաշտի առկայություն

Ներքին աուդիտի որակի երաշխավորման իրավական դաշտի առկայության համար հիմք են հանդիսացել Ապարան համայնքի ներքին աուդիտի որակի երաշխավորման և բարելավման ծրագիրը, ներքին աուդիտի գործունեության կանոնակարգը: Նշված փաստաթղթերն արդեն իսկ հաստատված էին մինչև պայմանագրի ուժի մեջ մտնելը: Ընդ որում՝ պայմանագրով նոր կանոնակարգի մշակման պահանջ առաջադրված չէր: Ներքին աուդիտի կանոնակարգով սահմանվել են ներքին աուդիտի նպատակը, դերը, լիազորությունները, պատասխանատվությունները, ներքին աուդիտի դերը ռիսկերի կառավարման, կառավարչական, ներքին հսկողության գործընթացներում, «ՓԸՐՖԵՔԹ ԱՌԻԴԻՏ» ՍՊԸ տնօրենի հարաբերությունները համայնքի ղեկավարի հետ, աուդիտի իրականացմանն առնչվող գրանցումների, ֆիզիկական գույքի նկատմամբ հասանելիության, աշխատակիցների հետ հաղորդակցվելու իրավունք, կազմակերպություններին մատուցվող խորհրդատվական և հավաստիացման ծառայությունների բնույթը:

ՆԱ շրջանակը սահմանվել է կանոնակարգով և պայմանագրով:

ՆԱ հաշվետու է համայնքի ղեկավարին, չի հանդիսանում համայնքի կառավարչական գործընթացի մաս կամ ռիսկերի կառավարման համար պատասխանատու, որով ապահովվում է ներքին աուդիտորների անկախությունը և օբյեկտիվությունը: «ՓԸՐՖԵՔԹ ԱՌԻԴԻՏ» ՍՊԸ տնօրենի կողմից ապահովվում է հնարավոր խարդախությունների մասին կասկածների կամ հայտնաբերման բոլոր դեպքերի մասին իրազեկում կազմակերպության ղեկավարին:

Կանոնավոր կերպով գումարվում են Ներքին աուդիտի նիստեր, որը ղեկավարում է համայնքի ղեկավարը: Ներքին աուդիտի «ՓԸՐՖԵՔԹ ԱՌԻԴԻՏ» ՍՊԸ տնօրենի կողմից, որպես նիստի քարտուղար, Համայնքի ղեկավարի քննարկմանն են ներկայացվում իրականացված աուդիտի հաշվետվությունները, որի արդյունքում կայացվում է համապատասխան որոշում արձանագրված առաջարկությունների կատարման, թերությունների, խախտումների վերացման ուղղությամբ, տրվում են հանձնարարականներ: Համայնքի ներքին աուդիտի ընթացիկ գործունեությունն

իրականացնում է և իրականացման համար պատասխանատվություն է կրում «ՓԸՐՖԵՔԹ ԱՌԻԴԻՏ» ՍՊԸ տնօրենը, ով հաշվետու է համայնքի ղեկավարին:

«ՓԸՐՖԵՔԹ ԱՌԻԴԻՏ» ՍՊԸ տնօրենը կազմում և Համայնքի ղեկավարի քննարկմանն է ներկայացնում համայնքի ներքին աուդիտի 3 տարվա ռազմավարական և տարեկան ծրագրերը, հաստատում դրանք և ներկայացնում համայնքի ղեկավարի կողմից վավերացմանը: Պարբերաբար ներկայացնում է ամփոփ տեղեկատվություն կատարողականների վերաբերյալ, իրականացնում է վերստուգման գործընթաց: Աուդիտորական առաջադրանքի իրականացման փուլերում «ՓԸՐՖԵՔԹ ԱՌԻԴԻՏ» ՍՊԸ տնօրենի կողմից գնահատվում են աշխատանքային փաստաթղթերը, վերահսկվում աշխատանքների համապատասխանությունն առաջադրանքով սահմանված խնդիրներին և ժամկետներին: «ՓԸՐՖԵՔԹ ԱՌԻԴԻՏ» ՍՊԸ տնօրենի կողմից աշխատանքների կատարման նկատմամբ իրականացվում է հսկողություն, ստուգաթերթերի կիրառման առկայության ապահովում: Համայնքի ղեկավարի կարծիքների, դիտողությունների, եզրակացությունների հիման վրա իրականացվում է հետագա աշխատանքների կազմակերպման գործողություններ:

Որակի երաշխավորման և բարելավման ծրագրի ապահովման շրջանակներում և նպատակով առաջադրանքների իրականացման ավարտական փուլում աուդիտի ենթարկվող միավորներին տրամադրվում է առաջադրանքի իրականացման որակի վերաբերյալ ստուգաթերթ: Այն լրացվում է աուդիտի ենթարկվող միավորի կողմից և հաստատվում կազմակերպության ղեկավարի կողմից:

2020թ.-ի ընթացքում իրականացված աուդիտորական առաջադրանքից հետո աուդիտի ենթարկված միավորի կողմից լրացվել, հաստատվել և «ՓԸՐՖԵՔԹ ԱՌԻԴԻՏ» ՍՊԸ տնօրենին է ներկայացվել համապատասխան ստուգաթերթ: Արդյունքներն ամփոփվել են «ՓԸՐՖԵՔԹ ԱՌԻԴԻՏ» ՍՊԸ տնօրենի կողմից:

Արդյունքում առավելագույն 4 բալլի դիմաց, առաջադրանքի իրականացման որակի գնահատականը կազմել է 3,57 բալլ կամ 89,3%:

«ՓԸՐՖԵՔԹ ԱՌԻԴԻՏ» ՍՊԸ տնօրենի կողմից վերլուծության են ենթարկվել ստուգաթերթերի միջոցով միավորների կողմից տրված գնահատականները, հնարավորինս բացահայտվել և բացառվել են ցածր գնահատականների պատճառները: Ինքնագնահատման գործընթացն իրականացվել է ներքին աուդիտի վերաբերյալ օրենսդրական դաշտը կարգավորող նորմատիվ իրավական ակտերի հիման վրա կազմված ստուգաթերթերի միջոցով:

«ՓԸՐՖԵՔԹ ԱՌԻԴԻՏ» ՍՊԸ

տնօրեն



Ա. Բաբայան

**Լիազոր մարմնին ներկայացվող 2020 թվականի տարեկան ամփոփ
հաշվետվության այլ բաղկացուցիչ աղյուսակներ**

Կազմակերպության անվանումը՝
«ՓԸՐՖԵՔԹ ԱՌԻԴԻՏ» ՍՊԸ տնօրեն՝

Ապարանի համայնքապետարան
Ա. Բաբայան

1. Ներքին աուդիտի բաժնի (ՆԱԲ) ներքին գնահատումներ

N	Նկարագիր	Ընթացիկ տարի	Նախորդ առաջին տարի	Նախորդ երկրորդ տարի
1)	Տվյալ տարվա աուդիտի առաջադրանքների արդյունավետության գնահատման արդյունքները՝ համաձայն Ձև N 1-ի	3,57		
2)	Աուդիտի առաջադրանքների իրականացման որակի վերաբերյալ աուդիտի ենթարկվող միավորների կողմից տրված գնահատման արդյունքները՝ համաձայն Ձև N 2 -ի	3,82		
3)	Ներքին աուդիտի բաժնի տվյալ տարվա աշխատանքների համապատասխանության գնահատման արդյունքները՝ համաձայն Ձև N 3-ի (համապատասխանում է, մասամբ է համապատասխանում կամ չի համապատասխանում)	Համապատասխանում է		

2. Ներքին աուդիտորներ

N	Նկարագիր	Ընթացիկ տարի	Նախորդ առաջին տարի	Նախորդ երկրորդ տարի
1)	Ներքին աուդիտորների թվաքանակը, այդ թվում՝	3		
1.1)	Որակավորված ներքին աուդիտորների թվաքանակը	3		
1.2)	Ուսուցանվող ներքին աուդիտորների թվաքանակը			

3. Ներքին աուդիտի միջավայրի միավորները

N	Նկարագիր	Ընթացիկ տարի	Նախորդ առաջին տարի	Նախորդ երկրորդ տարի
1)	Կազմակերպության միավորների քանակ	10		
2)	Կազմակերպության գործառույթների քանակ	185		
3)	Ներքին աուդիտի տարեկան ծրագրով նախատեսված միավորների քանակ	10		
4)	Ներքին աուդիտի տարեկան ծրագրով նախատեսված միավորների գործառույթների քանակ	41		

5)	Հաշվետու ժամանակահատվածում ներքին աուդիտի ենթարկված միավորների քանակ	10		
6)	Հաշվետու ժամանակահատվածում ներքին աուդիտի ենթարկված միավորների փաստացի գնահատված գործառույթների քանակ	41		

4. Ներքին աուդիտի բաժնի կողմից իրականացված աուդիտի և խորհրդատվական ծառայությունների քանակներն՝ ըստ տեսակների

N	Փաստացի իրականացված աուդիտի կամ խորհրդատվական ծառայության տեսակները	Ընթացիկ տարի	Նախորդ առաջին տարի	Նախորդ երկրորդ տարի
1)	Համակարգի գնահատման աուդիտ	10		
2)	Կատարողականի աուդիտ			
3)	Ֆինանսական աուդիտ			
4)	Տեղեկատվական տեխնոլոգիաների աուդիտ			
5)	Համապատասխանության կամ իրավական աուդիտ			
6)	Գնումների աուդիտ, այդ թվում՝			
6.1)	Գնումների բազային միավորի յոթանասունապատիկը գերազանցող գին ունեցող գնումների աուդիտ, այդ թվում՝			
6.1.1)	Գնման ընթացակարգի մասով			
6.1.2)	Պայմանագրի կատարման մասով			
6.2)	Գնումների բազային միավորի յոթանասունապատիկը չգերազանցող գին ունեցող գնումների աուդիտ, այդ թվում՝			
6.2.1)	Գնման ընթացակարգի մասով			
6.2.2)	Պայմանագրի կատարման մասով			
6.3)	Պետական, ծառայողական և բանկային գաղտնիք պարունակող գնումների, այդ թվում՝			
6.3.1)	Գնման ընթացակարգի մասով			
6.3.2)	Պայմանագրի կատարման մասով			
7)	Խորհրդատվության մատուցում ղեկավարության որևէ մի գործառույթի իրականացման ընթացքում			
8)	Օժանդակություն նման գործընթացների իրականացման ընթացքում			
9)	Տարբեր բնույթի ուսուցողական և վերապատրաստման դասընթացների կազմակերպում և այլն			
10)	Այլ, այդ թվում՝			
10.1)				
11)	Ընդամենը	10		

5. Ներքին աուդիտի բաժնի կողմից պլանավորված և իրականացված առաջադրանքների քանակը

N	Նկարագիր	Ընթացիկ տարի	Նախորդ առաջին տարի	Նախորդ երկրորդ տարի
1)	Տարեկան ծրագրով պլանավորված առաջադրանքների քանակ, այդ թվում՝	10		
1.1)	աուդիտորական առաջադրանքների քանակ	10		

1.2)	խորհրդատվական ծառայությունների քանակ			
2)	Փաստացի իրականացված առաջադրանքների քանակը, այդ թվում՝	10		
2.1)	Աուդիտորական առաջադրանքների քանակ	10		
2.2)	խորհրդատվական ծառայությունների քանակ			

6. Ներքին աուդիտի բաժնի կողմից իրականացված աուդիտի և արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ տեղեկություններ

N	Նկարագիր	Ընթացիկ տարի	Նախորդ առաջին տարի	Նախորդ երկրորդ տարի
1)	Վերջնական հաշվետվություններում ներկայացված անհամապատասխանությունների քանակ, այդ թվում՝	73		
1.1)	Օրենքների և այլ իրավական ակտերի նկատմամբ	70		
1.2)	Կազմակերպության գործունեության առնչվող այլ պայմանների (պայմանագրեր, գերատեսչական նորմատիվային ակտեր և այլն) նկատմամբ	3		
2)	Վերջնական հաշվետվություններում ներկայացված առաջադրանքների քանակ	73		
3)	Աուդիտորական առաջադրանքների արդյունքում կազմված գործողությունների ծրագրով նախատեսված միջոցառումների քանակը, այդ թվում՝	73		
3.1)	Գործողությունների ծրագրով սահմանված ժամկետում իրականացված միջոցառումների քանակը	70		
3.2)	Գործողությունների ծրագրով սահմանված ժամկետի խախտումով իրականացված միջոցառումների քանակը			
3.3)	Գործողությունների ծրագրով սահմանված, սակայն չիրականացված միջոցառումների քանակը			
3.4)	Գործողությունների ծրագրով սահմանված ժամկետում գտնվող միջոցառումների քանակը	3		
4)	Առաջադրանքների արդյունքում արձանագրված անհամապատասխանությունների քանակը, այդ թվում՝	73		
4.1)	Իրավապահ մարմիններին փոխանցված			
4.2)	Ինքնուրույն կանխված	73		



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ Ա Պ Ա Ր Ա Ն Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի Ա Վ Ա Գ Ա Ն Ի

ՀՀ Արագածոտնի մարզ, ք. Ապարան Բաղրամյան 26, Հեռ. (0252)2-43-93
Էլ. փոստ՝ aparanixaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ՄԱՐՏԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ N 11-Ա

ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱՄԱՅՆՔԻ
2020Թ. ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

„Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1/5, 38-րդ հոդվածի 1/1 կետերի, 83-րդ հոդվածի 2-րդ մասի, „Բյուջետային համակարգի մասին,, ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի պահանջներին համապատասխան.

Ապարան համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Ապարան համայնքի ղեկավարի հաշվետվությունը՝ համայնքի 2020թ. բյուջեի կատարման վերաբերյալ՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Համայնքի ղեկավար պարոն Կ. Եղիազարյանին՝

ա/անհրաժեշտ քայլեր ձեռնարկել համայնքի 2021թ վարչական և ֆոնդային բյուջեների կատարումն ապահովելու ուղղությամբ:

բ/հետևողական աշխատանքներ ծավալել և վարչական միջոցներ ձեռնարկել տեղական հարկերի, տուրքերի և վարձավճարների վճարումից խուսափողների նկատմամբ, նվազագույնի հասցնել ապառքները:

գ/ապահովել համայնքի զարգացման և տարեկան աշխատանքային պլանով նախատեսված աշխատանքների ամբողջական իրականացումը, այդ աշխատանքներում ապահովելով անհրաժեշտ հրապարակայնություն և թափանցիկություն:

Ավագանի՝

(կողմ-10)

(դեմ-0)

(ձեռնպահ-0)

Թադևոսյան Հայկազուր

Պետրոսյան Արա

Մակարյան Վահան

Երեմյան Աղվան

Գեղամյան Խաչիկ

Վարդանյան Հովհաննես

Ասատրյան Արամ

Կարապետյան Էդգար

Շահբազյան Հովհաննես

Կարապետյան Արտյոմ

Համայնքի ղեկավար՝

Կ.Եղիազարյան

**ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱՄԱՅՆՔԻ 2020Թ.
ԲՅՈՒՋԵԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ**

Ապարան համայնքի 2020 թ գործունեությունը նպատակաուղղված է եղել համայնքի 2020 թ բյուջեի կատարումն ապահովելու և դրա շնորհիվ համայնքի կենսագործունեության բոլոր ուղղությունների բնականոն գործունեությունն ու բնակավայրերում առկա առաջնային խնդիրների լուծմանը: Ապահովվել է կատարված աշխատանքների թափանցիկությունն ու հրապարակայնությունը՝ համայնքային կայքի, սոց. ցանցերի և բնակչության հետ հանդիպումների միջոցով: Ավագանու որոշումները, համայնքապետի որոշումներն ու կարգադրությունները, համայնքի բյուջեն, բյուջեի կատարողականները, համայնքապետարանի գործունեության հիմնական ուղղություններն մշտապես լուսաբանվել են համայնքային կայքում, որը հասու է եղել համայնքի բոլոր բնակիչներին: 2020թ. ընթացքում կայացել է ավագանու 7 նիստ, ընդունվել են 104 որոշումներ: Ընդունվել են համայնքապետի 692 որոշումներ, 244 կարգադրություններ: Տարվա ընթացքում հետևողական աշխատանքներ են տարվել հողի և գույքի շտեմարանների ճշգրտման, համայնքային եկամուտների հաշվարկային ցուցանիշների ճիշտ արտահայտման և այդ ուղղությամբ բնակիչների դժգոհությունները նվազագույնի հասցնելու գործում: Դրա շնորհիվ շտեմարանները դարձել են ավելի կառավարելի և վերահսկելի, ճշգրտման աշխատանքները շարունակվում են: Օրեցօր նկատելի են պարտաճանաչ հարկատուների թվաքանակի աճման միտումներ: Սեփական եկամուտների հավաքագրման գործում տարվում են ամենօրյա օպերատիվ հաշվառում և վերլուծություն, բացատրական և նախազգուշական աշխատանքներ: 2020 թ վարչական բյուջեն կատարվել է 100,2 %-ով, սեփական եկամուտները՝ 101,2 %-ով:

Համայնքի 2020 թ բյուջեի ձևավորման աղբյուրները և կատարված ցուցանիշները՝

Եկամտատեսակներ	Պլան /հազ. դրամ/	Կատարված	Կատ. %
ՀՀ կառավարության կողմից տրված դոտացիա+այլ	567.160.600	565.593.900	99
ՔԿԱԳ բաժնի պահպանման ծախսեր	5.930.300	5.930.300	100,0
Արվեստի դպրոցին տրված սուբվենցիա	230.000.000	232.790.650	101,21
Համայնքի սեփական եկամուտներ	4.200.700	4.200.700	100,0
Ընդամենը վարչական բյուջեն՝	807.291.600	808.515.550	100,2
Ֆոնդային բյուջեի նախատեսված մուտքեր	50.000.000	33.980.150	68,0
	857.291.600	842.495.700	98,3

2019թ. բյուջեի սեփական եկամուտների կատարումն ըստ եկամտատեսակների

N	ԵԿԱՄՏԱՏԵՍԱԿՆԵՐ	Պլան /հազ.դրամ/	Կատարված /հազ.դրամ/	Կատարման %
1	Հողի հարկ	60.400.000	58.087.100	96,2
2	Հողի և գույքի վարձավճար	18.700.000	19.498.460	104,3
3	Գույքահարկ	91.232.000	114.214.350	125,2
4	Տուրքեր և վճարներ	24.768.000	18.262.035	73,7
5	Վարձավճարներ /աղբահանության և խմելու ջրի/	34.900.000	22.728.705	65,1
	Ընդամենը վարչական բյուջե՝	230.000.000	232.790.650	101,2
	Կապիտալ գործառույթներից մուտքեր՝	50.000.000	33.980.149	68,0

Համայնքի բյուջեի սեփական եկամուտների ուղղություններից հիմնականում չեն կատարվել հողի հարկի մասով՝ թերակատարումը կազմել է 3,83 %, տեղական տուրքերի և վճարների մասով՝ 26,3%, աղբահանության և խմելու ջրի վարձավճարները՝ 34,87 %, - ով:

Աղբահանության և խմելու ջրի վարձավճարների մասով գանձված 22.728.704 դրամից 12.217.986 դրամը բաժին է ընկնում Ապարան քաղաքի աղբահանությանը, իսկ գյուղական 20 բնակավայրերում հավաքագրումը միասին կազմել է 10.510.718 դրամ /46,2 %/:

Գյուղական բնակավայրերից պլանը կատարվել է միայն Երնջատափ բնակավայրում:

Գանձման ցուցանիշը խիստ անբավարար է եղիպատուշ /12%/ , Արայի /15,04 %/, Քուչակ /17,04%/ , Վարդենիս /15,91%/ , Թթուջուր/17,64%/ , Լուսագյուղ /19,97%/ , Նիգավան/29,49%/ , Չքնաղ /38,38%/ , Ջրամբար /37,57%/ , Արագած /38.23%/ , Սարալանջ /48 %/ բնակավայրերում:

Տեղական տուրքերի և վճարների պլանի թերակատարման հիմնական պատճառը եղել է կորոնավիրուսի պատճառով մանկապարտեզների և արվեստի դպրոցների չափատեղը, հետևաբար և 2րդ կիսամյակի համար նախատեսված 9,7 միլիոն վճարների չհավաքագրելը:

2020թ. սեփական եկամուտների պլանային առաջադրանքները չեն կատարվել Արագած, Վարդենիս, Ջրամբար, Ձորագլուխ, Նիգավան և Քուչակ վարչական տարածքներում:

Հարկերի հավաքագրման աշխատանքներն ավելի պատշաճորեն կատարելու, ապառքները նվազագույնի հասցնելու գործում առկա են մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներ:

Դեռևս մեծ թիվ են կազմում մահացած հարկատուների ժառանգություն չբացողները, բնակավայրից երկար տարիներ բացակայողները, որոնց ապառքները կազմում են ընդհանուր ապառքների 20-25%:

Դեռևս քիչ չեն նաև տարբեր պատճառներով հարկերը ծամանակին չվճարողները:

Հարկատուների մոտ բացակայում է համայնքի նկատմամբ պատասխանատվության և քաղաքացիական պարտքի զգացումը, իսկ համայնքապետարանի կողմից նրանց նկատմամբ դեռևս ցուցաբերվում է հանդուրժողականություն:

Չնայած Տեղական տուրքերի պլանը կատարվել է 103, 6 %, սակայն շարունակում է խնդիր մնալ դրանք սահմանված ժամկետում՝ մինչև գործունեության ծավալումը վճարելու և համապատասխան թույլտվությունը ժամանակին ստանալը:

31.12.2020 թ դրությամբ հողի հարկի գծով 11700 հարկատուներից ապառքներ ունեն 4500-ը՝ 38 %, շենք-շինությունների գույքահարկի գծով՝ 8660 հարկատուներից՝ 840-ը՝ 9,7 %, ավտոմեքենաների գույքահարկի գծով՝ 5929 հարկատուներից՝ 1420-ը՝ 24 %:

31.12.2020 թ դրությամբ հողի և գույքի հարկերի ապառքները կազմում են՝

Հողի հարկի մասով՝

Ֆիզիկական անձանց՝ 111.447.526 դրամ, տույժերը՝ 83.503.310 դրամ, ընդամենը՝ 194.950.836 դրամ:

Իրավաբանական անձանց՝ 442.599 դրամ, տույժերը՝ 506.862 դրամ, ընդամենը՝ 949.461 դրամ:

Գույքահարկի մասով՝

Ֆիզիկական անձանց՝ 90.496.986 դրամ, տույժը՝ 24.996.682 դրամ, ընդամենը՝ 115.493.668 դրամ

Իրավաբանական անձանց՝ 3.730.105 դրամ, տույժը՝ 5.453.928 դրամ, ընդամենը՝ 9.184.033 դրամ

Ընդհանուր ապառքը կազմում է 310.445.504 դրամ, որից՝ հաշվարկային ապառքը՝ 201.944.512 դրամ, տույժերը՝ 108.499.992 դրամ:

Հողի և գույքի հարկերի ընդհանուր ապառքը /առանց տույժերի/ կազմում է 201.944.512 դրամ:

Վիճակը հատկապես անբավարար է Ջրամբար, Վարդենիս, Թթուջուր, Ափնագյուղ, Շենավան, Արագած, Երնջատափ, Քուչակ, Նիգավան գյուղերում և Ապարան քաղաքում, որոնցում ապառքները զգալիորեն գերազանցում են տարեկան հաշվարկային ցուցանիշները:

Նշված վարչական տարածքների ղեկավարները բավարար հետևողականություն և համապատասխան աշխատանքներ չեն տանում վիճակը բարելավելու ուղղությամբ:

Կարգապահ հարկատուներին խրախուսելու նպատակով 188 հարկատուների՝ 6.841.695 դրամի չափով, տրամադրվել են հարկային արտոնություններ:

Անպարտաճանաչ հարկատուների նկատմամբ 2020 թ հարուցվել է 68 վարչական վարույթ, որոնցից 8-ի նկատմամբ վարույթները կարճվել են պարտքերը մարելու հետևանքով, հարկադիր ծառայության վարույթ են ուղարկվել 11 գործեր, իսկ մյուսների նկատմամբ կայացված որոշումները չեն ուղարկվել տարբեր պատճառներով՝ վարչական որոշումների ստացումից հրաժարվելու, պատերազմին մասնակցության, սոցիալական վիճակի և այլ պատճառներով:

2020 Թ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ՝

N	Հոդվածի անվանումը	ՊԼԱՆ Հազ.դրամ	ԿԱՏԱՐՎԱԾ Հազ.դրամ	ԿԱՏԱՐՄԱՆ %
	ԸՆԴՀԱՄԵՆ ԾԱԽՍԵՐ՝	1.080.589,7	1.047.944,8	97,0
1	Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների մասով՝	307.164,2	288.119,6	93,8
	Որից՝			
-	Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարություն	270.277,5	258.170,3	95,5
-	Հիմնական խմբին չդասվող պարտքային պարտավորություններ			
-	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	30.724,5	26.132,7	85,0
-	ՔԿԱԳ բաժնի պահպանում	6.162,1	3.816,6	62,0
2	Տնտեսական հարաբերություններ	306.287,0	317.393,9	103,6
	Որից՝			
	ճանապարհային տրանսպորտ	306.287,0	317.393,9	103,6
3	Շրջակա միջավայրի պաշտպանություն, այդ թվում՝			
-	աղբահանում			
4	Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն	279.817,0	267.378,5	95,5
	Որից՝			
-	Բնակարանային շինարարություն	30.767,2	30.634,6	99,0
-	Ջրամատակարարում և կոյուղի	20.028,4	9.330,7	46,0
-	Բնակ.շինարարություն և կոմունալ ծառայություն	163.095,0	163.020,0	99,9
-	Արտաքին լուսավորություն	65.826,4	64.393,2	97,8
5	Հանգիստ, մշակույթ և կրոն բնագավառի մասով	30.163,2	24.067,5	79,8
	Որից՝			
-	Սպորտային ծրագրեր	4.890,0	1.644,0	33,6
-	Գրադարանի մասով	7.843,2	7.534,8	96,0
-	Մշակույթի մասով	15.730,0	14.888,7	94,6
6	Կրթության բնագավառի մասով՝	143.458,2	137.403,5	95,7
	Որից՝			
-	Նախադպրոցական կրթության բնագավառի մասով՝	62.940,0	59.957,0	95,2
-	Արտադպրոցական դաստիարակության բնագավառի մասով	80.518,2	77.446,5	96,2
7	Սոցիալական Պաշտպանություն	13.700,0	13.581,8	99,0
	Որից			
-	Սոցիալական հատուկ արտոնություններ	13.700,0	13.581,8	99,0
8	Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդ	152.157,8	152.157,8	100,0

Աշխատանքներ են տարվել սոցիալապես անապահով ընտանիքներին և խմբերին օգնությամբ աջակցություն ցուցաբերելու, սոցիալական լարվածությունը հնարավորինս մեղմելու ուղղությամբ: Դրամական աջակցություն են ցուցաբերվել սոցիալապես անապահով ընտանիքների, բուժման կարիք ունեցող քաղաքացիների և ուսանողների 108 ընտանիքների՝ 4.627.800 դրամի, զոհվածների ընտանիքների՝ 2.200.000 դրամի չափով:

Հուլարկավորությունների կազմակերպման նպատակով հատկացվել է ՝ 6.430.000 դրամ:

Վարձավճարների գեղջման արտոնություններ են սահմանվել մանկապարտեզներում և արվեստի դպրոցներում՝ ծնողազուրկ և բազմազավակ ընտանիքների երեխաների համար:

Շուրջ 550 երեխաներ անվճար հաճախում են մարզադպրոցներ և մշակույթի կենտրոն:

Համայնքային ենթակայության 13 հանդիսասրահներն իրենց կոմունիկացիաներով /սպասք, գազ, էլ. էներգիա/ անվճար տրամադրվում են բնակիչներին՝ սգո և այլ արարողությունների կատարման նպատակով:

Ֆոնդային բյուջեի մասով մուտքերի պլանը կատարվել է 68 % -ով:

Չնայած Ֆոնդային բյուջեի մուտքերի թերակատարմանը, զգալի աշխատանքներ են կատարվել քաղաքում և 20 գյուղական բնակավայրերում առկա խնդիրների լուծման, վարչական տարածքների կենսագործունեության ապահովման ուղղությամբ:

Համայնքի վարչական տարածքում 2020թ իրականացված ծրագրերի և մատուցած ծառայությունների տվյալները, ըստ բնակավայրերի, ներկայացված է հավելված 2-ում:

Գնահատելով կատարված աշխատանքներն ու առաջիկա անելիքները, հաղթահարելով առկա պրոբլեմներն ու դժվարությունները, խնդիր է դրվում պահպանելու ձեռքբերումները և անելու հնարավոր առավելագույնը ապահովելու բոլոր բնակավայրերի բավարար կենսագործունեությունը, կայուն և հետևողական զարգացումը:

Համայնքապետարանի գործունեության ապահովման և արդյունավետության բարձրացման գործում արդյունավետ է եղել ավագանու գործնական և համերաշխ աշխատանքը, խնդիրները համատեղ ուժերով հաղթահարելու հետևողականությունը, կամքն ու վճռականությունը:

Աշխատակազմի քարտուղարի ժ/պ



Ա.Կարապետյան